ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«03» 09 2025 թ.
№ ԿԼՈՒՆՔ/1396

«Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ին
ՀՎՀՀ 67142494
հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, Գյուլագարակ 14/21
հեռ. 077-692-000
էլ. հասցեն՝ ARMGROUP24@MAIL.RU

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-25-8/20» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ն: Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ն հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ն որոշ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, ինչից հետո ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ի միջև 04.07.2025թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԳՀԱՊՁԲ-25-8/20-1 ծածկագրով պետական գնման պայմանագիր:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ Արմեն Բարիսի Թունյանը հանդիսանում է «Արմենգրուպ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 06963043) տնօրենը և հիմնադիրը, որը 2024 թվականի մայիսի 21-ից մինչև 2026 թվականի մայիսի 21-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, այս առումով «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ի և «Արմենգրուպ» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, ինչը տվյալ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար Պայմանագիրը չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ի միջև 04.07.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-8/20-1 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. սեպտեմբերի 3-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 3 138 660 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Այս կապակցությամբ տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված գումարը, ապա «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնի բնօրինակը մինչև 2025թ. սեպտեմբերի 12-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ի կողմից պայմանագրի ապահովման գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ի կողմից վճարման ենթակա՝ պայմանագրի ապահովման գումարը գանձելու ուղղությամբ:

Միաժամանակ, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ի միջև 04.07.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-8/20-1 գնման պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերով և քանակներով ապրանքներ ձեռքբերելու դեպքում «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ն պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ